

ՊՐՈՖ. Զ. ԱԻԱԼՈՎ

ԲԱԹՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Վրացի յայտնի ֆաղափական գործիչ, Տրապիզոնի եւ Բաքուի խորհրդաժողովների, ապա Վրաստանի Եւրոպայի պատկերակութեան իրաւագէտ-խորհրդական պրոֆէսոր Զ. Աւալովը, 1923թ. Փարիզում հրատարակեց «Վրաստանի Անկախութիւնը 1918-21թ.թ. Միջազգային Քաղաքականութեան մէջ» անունով ուսերէն մի հատոր:

Անդրկովկասի կեանքին վերաբերող հարուստ փաստերով ու լուսաբանութիւններով յագեցած մի աշխատութիւն, որ դժբախտաբար, հայ հասարակութեան կողմից անցաւ գրեթէ աննկատ, չնայած որ շատ ուսանելի նիւթ էր պարունակում հայերի համար:

Պրոֆ. Աւալովը հանգամանօրէն պատկերացրել ու վերլուծութեան է ենթարկել Անդրկովկասի երեք ժողովուրդների՝ հայերի, վրացիների եւ ագրէշանցիների փոխյարաբերութիւններն ու իւրաքանչիւրի ֆաղափական ձգտումները առանձին-առանձին, Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից եւ փայլալուր, խորհրդային իշխանութեան ֆաղափականութիւնը կովկասեան նորակազմ հանրապետութիւնների հանդէպ, հայ-վրացական, ապա հայ-բրգական բախումները. կովկասեան ժողովուրդների ներկայացուցիչների դեգերումները Եւրոպայում, միջազգային դիւանագիտութեան խաղերը, Ազգերի Լիգայի անգօրութիւնը կովկասում զարգացող դէպքերի նրկատմամբ, բոլշեւիկեան յառաջխաղացումը, անկախ հանրապետութիւնների անկումը եւ այլ բազմաթիւ երեւոյթներ: Բնականաբար, այդ երեւոյթները Աւալովը ըմբռնում եւ ներկայացնում է վրաց հայրենասէրի տեսակէտով, բայց ի պատիւ իրեն՝ պէտք է ասել, որ նա կարողացել է ընդհ. առմամբ մնալ առարկայականութեան սահմաններում եւ տալ մերկապարանոց նշմարտութիւնը՝ հրապարակ հանելով երբեմն այնպիսի փաստեր, որոնք մինչեւ այդ խնամքով ծածկուում էին վրաց գործիչների կողմից: Մերկացումների, հեգնութեան եւ դատապարտութիւնների ընթացքին նա հաւասարապէս չի խնայում քէ իր ազգակցին, քէ հային եւ քէ ագրէշանցուն: Գիրքը գրած է հայրենասէրի անկեղծ ու լայն շնչով, շօշափում է մինչեւ այսօր էլ կովկասի կեանքը յուզող հրատապ խնդիրներ, մատը դնում է շատ ցաւոտ վերքերի վրայ, անում է ծանրակշիռ մերկացումներ, եւ հաս-

կանալի է նրա առաջ բերած յուզումը վրաց ազգային – փաղափական շրջաններում:

Աւալովի գիրքը պետք է որ քարգմանւէր նաեւ հայերէն: Այդ պարտականութիւնը տարիներ առաջ կատարել է մեր աշխատակից Ա. Արշակունին, բայց նիւթական միջոցների բացակայութեան հետեւանձով կարելի չի եղել տպագրել: «Վէմ»-ը ուրախ կը լինէր հայ ընթերցողներին ներկայացնել Աւալովի ամբողջ գործը. դժբախտաբար տեղի պակասութիւնը զրկում է մեզ այդ հնարաւորութիւնից: Ուստի Ա. Արշակունու քարգմանութիւնից մենք կը հրատարակենք միայն այն գլուխները, որոնք անմիջական առնչութիւն ունին հայոց նորագոյն պատմութեան հետ:

Զուտ գործնական նկատումներով, հաշի առնելով «Վէմ»ի սահմանափակ էջերը, ստիպւած ենք նիւթը տալ աննշան յապաւումներով եւ մաս–մաս, նայած տեղի յարմարութեան: Առաջին առթիւ տալիս ենք Բաթումի խորհրդաժողովին վերաբերող գլուխները: Ընթերցման դիւրութեան համար այդ գլուխները քաղարում ենք մէկից սկըսած. տակը, ծանօթութեան մէջ, դնելով հեղինակի քահանարանեալը:

ԳԼՈՒԽ Ա.*)

ԴԷՊԻ ԲԱԹՈՒՄ՝ ՏԱՃԻԿՆԵՐԻ ՄՕՏ

1. ԻՆՉՊԷՍ ՊԱՏԱՀԵՅ.

1918-ի Բաթումի խորհրդաժողովի ականատեսի տպաւորութիւններէց առաջ օգտակար է մի քանի խօսք ասել այն դէպքերի եւ պարագաների մասին, որոնք առաջ բերին կովկասեան ժողովրդների դիւանագիտական առաջին շփումը եւրոպական պետութիւնների հետ – պատմականօրէն եւ քաղաքականապէս ամբողջ խնդիրը վերջինների մէջ էր, թէեւ խօսակցութիւնը տարւել է գլխաւորապէս Տաճկաստանի հետ **):

Երբ 1917-ի Նոյեմբերին կազմւեց Անդրկովկասեան Կոմիսարիատը, ուսումնական ճակատի պատերազմը շարունակելու անկարելիութիւնը այլեւս կասկած չէր յարուցանում, ուստի որոշւեց Տաճ-

*) Բնագրում V գլուխ, 13-րդ պրակ:

**) Հետագայ դէպքերի համար տե՛ս վրացական կառավարութեան հրատարակած «Անդրկովկասի եւ վրաստանի արտաքին փաղափականութեան վաւերագրերն ու նիւթերը», Թիֆլիզ, 1919 թ. (առանբէն):

կաստանի հետ կնքել զինադադար : Սրա պայմանները մշակեց ռադմաճակատի ռուս զինուորական իշխանութիւնը , որ դեռ պահել էր իր գոյութիւնը (դժբախտաբար , միայն անունով) , եւ զինադադարը ստորագրուեց 1917 թ . դեկտ . 5 (18)–ին՝ Երզնկայում : Միաժամանակ պատերազմող կողմերի միջեւ հաստատուեց սահմանորոշ մի դիմ , Սեւ Մովկից սկսած մինչեւ Վանայ լիճը :

Քիչ յետոյ , տաճիկ կառավարութեան նախաձեռնութեամբ հարց յարուցուեց՝ հաշտութեան բանակցութիւններ սկսելու մասին Անդրլիովկասի հետ (1918 թ . յունւարի սկիզբը , հին տոմարով) :

Կոմիսարիատը ճիշդ տեղեկութիւն չունենալով Սահմանադիր Ժողովի վիճակի մասին եւ սպասելով Ռուսաստանի հարաւում այդ ժամանակ գոյութիւն ունեցող նորակազմ (ոչ–խորհրդային) պետութիւնների կարծիքին բռնելիք դիրքի մասին , ի վիճակի չէր տաճիկների առաջարկին որոշ պատասխան տալու :

Այդ տատանումներով , որոնք հետեւանք էին ոչ միայն ստեղծւած ծանր կացութեան , այլ եւ «կայսերական» օրինապահութեան զգացումի եւ ռուսական յեղափոխութեան ու դեմոկրատիայի միութեան կենդանի մտքի , կորչում էր թանկագին ժամանակը . ռադմաճակատը վերջնականապէս քայքայուեց . «սահմանորոշ դիմը» , որ այս կողմից չէր պաշտպանւում , տաճիկներին այլեւս չէր նեղում , եւ պատրակ բռնելով հայ զօրամասերի գործած բռնութիւնները մահմետական ազգաբնակչութեան վերաբերմամբ , 1918 թ . յունւարի վերջերը (հին տոմար) նրանք զիմեցին յարձակման ռուս–տաճիկական սահմանի ուղղութեամբ :

Միայն Անդրլիովկասեան Սէյմի գումարումով (1918 թ . փետր . 10) նոր ձգձգումներից յետոյ , որոշուեց վերջապէս հաշտութեան ինքնուրոյն բանակցութիւններ սկսել տաճիկների հետ՝ բանակցութիւնների վայր ընտրելով Տրապիզոնը , որ այն ժամանակ դեռ բրտնւած էր կովկասեան զօրքերով , եւ Տաճկաստանի հետ վարելիք բանակցութիւնների ընթացքին ջանալ ապահովել 1914 թւի պետական սահմանն եւ Հայաստանի ինքնավարութիւնը «Տաճկաստանի պետականութեան շրջանակում» . (Փետ . 16 , հ . տ .) : Եւ այդ այնպիսի ժամանակ , երբ կովկասեան ճակատն ամէն տեղ աւերել էր խարխուլ չէնքի պէս :

Թիֆլիսում , դեռ նոր էին հանել այս որոշումը , երբ Փետ . 17–ին ստացուեց Կարախանի հեռագրական մի հաղորդագրութիւնը , խորհուրդների որոշման մասին՝ ստորագրել Բրեստ–Լիտովսկի դաշնագիրը եւ այդ դաշնագրով Կարսի , Բաթումի եւ Արտահանի շրջանները

դիջել տաճիկներին, ալսինքն, արմատական փոփոխութեան ենթարկել Կովկասի 1914 թ. սահմանները յօդուտ Տաճկաստանի: Սէյմի մըշակած հաշտութեան պայմանները ստանում էին պարզապէս ցնորական բնոյթ:

Տաճկաստանը, իհարկէ, չյապաղեց, պահանջեալ՝ բոլորովին մաքրել իրեն տրամադրւած հողերը, որոնց մօտ էին հասել արդէն փաստօրէն նրա զօրքերը (Փետ. 25, հ. տ.). իսկ Կովկասեան կառավարութիւնը, դեռ մինչեւ այդ, (Փետ. 17) բողոք էր ներկայացուել անդրկովկասեան զաւատները դիջելու դէմ, մի դաշնագրով, «որը կնքւած է առանց Անդրկովկասի գիտութեան եւ հաւանութեան»:^{*})

Որքան տարօրինակ թւայ, հակառակ դրան, Տրապիզոնի խորհրդաժողովը գումարեց:

Տաճիկները, Ռուսաստանի ձեռքից երեք սանջակ ստանալով եւ այդ սանջակների գրաւումը փութացնելով, ինչպէս երեւում է, դէմ չէին, որ այդ գրաւումը Անդրկովկասն էլ հաստատէ իր կնիքով:

Իսկ ինչ վերաբերում է Անդրկովկասի պատուիրակութեան, նա ըստ երեւոյթին, յոյս ունէր հասնել իր դրած խնդիրների լուծմանը, չընալած որ Բրեստ-Լիտովսկից յետոյ քաղաքական կացութիւնը արմատապէս փոխել էր եւ ռազմաճակատը փաստօրէն քայքայել էր. այժմ արդէն Տրապիզոնն էլ տաճկական էր:

Տրապիզոնի խորհրդաժողովը, որ սկսեց Փետ. 27-ին (հ. տ.) եւ Ապրիլ 1-ին (հ. տ.), վերջացաւ անդրկովկասեան պատուիրակութեան յետսկոչումով Թիֆլիս, յանգեց հետեւեալ դիւանագիտական եղբակացութեանց. Անդրկովկասը, համաձայն տաճիկների վերջնագրի, պարտաւորեց ճանաչել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, իր Վրաստանի եւ Հայաստանի համար այնքան ծանր, բայց ներկայ վայրկեանին անխուսափելի պայմաններով:

Վերջնական հաշտութիւն Անդրկովկասը պիտի կնքէր, իհարկէ, ոչ միայն Տաճկաստանի, այլ եւ իր ղեկակիցների (Գերմանիայի, Աւստր եւ Հունգարիայի եւ Բուլղարիայի) հետ: Իսկ դրա համար ան-

^{*}) Իր ժամանակին զգալի յապաւումով Անդրկովկասի կառավարութեան յամմուրեց Բրեստ-Լիտովսկի բանակցութիւններին մասնակցելու հրաւերը: Այդ առաջարկութիւնը գործնական քննութեան չենթարկեց երեւի այն պատճառով, որ յետոյ ստացեց Բրեստ-Լիտովսկի բանակցութիւնների խզման լուրը: Այդ ժամանակ արդէն պատրաստակամութիւն կար հաշտութեան ամջատ բանակցութիւններ սկսելու Տաճկաստանի եւ Բուլղարիայի զինակցութեան պետութիւնների հետ:

հրաժեշտ էր նախօրօք յայտարարել Անդրկովկասեան Հանրապետուեան անկախութիւնը: Նոյնիսկ պայմանաւորաժէին, — ճիշտ է, մասնաւոր ձեւով, — որ հակառակ Անդրկովկասի պատգամաւորութեան յետ կանչելուն, խորհրդաժողովի աշխատանքները ընդհատուած են:

Այն էլ պէտք է ասել, որ այդպէս Տրապիզոնում էին դատում, իսկ Թիֆլիսում Սէյմը, խանդավառ յուզումով, անհրաժեշտ համարեց պատերազմը շարունակել, իբրեւ հետեւանք Ծերեթեթիւի հաւատարեցութեանը թէ՛ «հաշտել Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պայմանների հետ մենք չենք կարող. ժողովրդական զանգաճները չեն ընդունի», եւ Գեղեչկորիի յայտարարութեան, թէ՛ «ներկայ վայրկեանին կառավարութիւնն այլ որոշում չի կարող ունենալ, քան պատերազմը Տաճկաստանի հետ»^{*)}: Եւ հէնց այդ հիման վրայ պատգամաւորութիւնը յետ կանչեց Տրապիզոնից (Մարտ 31-ին, հ. տ.): Մի խօսքով, որոշեցին փորձել պատերազմի բախտը՝ չունենալով վստահելի զօրքեր եւ հակառակ Սէյմի մահմետական պատգամաւորների բացորոշ յայտարարութեան, թէ՛ «Այդ պատերազմի մէջ գործօն մասնակցութիւն ունենալ մենք չենք կարող, ուստի եւ պատասխանատուութիւնը չի ընկնում մեր վրա»:

Այսպիսի պայմաններում յեղափոխական ճարտասանութիւնը, խորհրդարանական ճառերը, դիմումները ժողովուրդներին, կոչերը զանազան կազմակերպութիւններին, «ամենքը դէպի ճակատ» եւ այլն փոխարինում էին այն, ինչ որ հին ժամանակ կատարւում էր չինական պատերազմներում վիշապների եւ ուրիշ ճիւղների պատկերներէրի օժանդակութեամբ:

Թիւրիմացութիւնը երկար չտեւեց:

Հէնց նոյն օրը, երբ Սէյմի ոգեւորութեամբ եւ խանդավառութեամբ յագեցած նիստի վերջում, Ն. Ժորդանիան յայտարարեց, թէ՛ «մենք պաշտօնապէս ոտք ենք կոխում պատերազմի ասպարէզ», տաճիկները բոլորովին «պաշտօնապէս» մտան Բաթում: Միաժամանակ նրանք մօտենում էին Կարսին, որ գրաւեց ապրիլ 12-ին (հ. տ.):

^{*)} Հետաքրքիր է համեմատել այն ամէնը, որ ասեց Անդրկովկասեան Սէյմում ի պաշտպանութիւն յեղափոխական պատերազմի (մարտ 30, հ. տ.) Լեւոնի կարծիքի հետ՝ արտայայտած բաւական նման պայմաններում ընդդէմ պատերազմի (փետր. 28-ին, կենտրոնական կոմիտէում). «Պատերազմի համար հարկաւար է գործ, — իսկ գործ չկայ: Հետեւաբար, անհրաժեշտ է ընդունել պայմանները» եւն.:

Պարզ էր, որ «սպտերազմական» գծին ոչ մի լաւ բան չէր բը-
խում, ուստի որոշեց նորին զօր տալ դիւանագիտական գծին:

Ապրիլ 9-ին յայտարարեց Անդրկովկասեան Դաշնակցական Հան-
րապետութեան անկախութիւնը, եւ նոյն ժամանակ որոշեց միջոց-
ներ ձեռք առնել հաշտութեան շուտափոյթ կնքման համար: Եւ միան-
գամայն անխուսափելի եւ հետեւողական կերպով Ե. Գեգեչկորիի
կառավարութիւնը հրաժարական տւեց եւ փոխարինեց Անդրկով-
կասեան Դաշնակցական Հանրապետութեան առաջին (միակ) դահլիճ-
ճով՝ որ կազմեց Ա. Ի. Զխենկելին:

Ապրիլ 10-ին անդրկովկասեան հրամանատարութիւնը կարգադը-
րեց դադարեցնել սպտերազմական զործողութիւնները. տաճիկները
սպառնալիցն են ման կարգադրութեամբ, բայց շտապեցին, առանց
սպասելու Կարսի կանոնաւոր ու լիակատար դադարման, պետական
զոյքերի փոխադրութեան եւ սաշտօնական յանձման, անմիջապէս
զրաւել բերդը, ապրիլ 12-ին:

Դրանից յետոյ, տաճիկ հրամանատարութեան ոչինչ չէր մնում,
բայց եթէ հաղորդել Թիֆլիս, թէ ... Օսմանեան Կառավարութիւնը
հանաչել է Անդրկովկասի անկախութիւնը եւ, համաձայն է Թիֆլիսի
ցանկութեան, յաջորդ բանակցութիւնների վայրը նշանակել Բա-
թումը (15-28 ապր. 1918թ.):

Տաճիկները արդէն զրաւել էին Բրեստ-Լիտովսկում իրենց բաժին
հասած գաւառները, եւ միաժամանակ ապացուցած էր, որ դեռ
չկազմակերպւած, ցնցւած Անդրկովկասը զուրկ է ամենասովորական
սպտերազմական զործողութիւնների կատարելու կարողութենից:

Ահա այսպիսի պայմաններում էր դուժարում Բաթումի Խորհր-
դաժողովը:

2. (14). «ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԳՆԱՅՔՈՒՄ»

Պատմում են, որ երբ Տրապիզոն ուղարկւած անդրկովկասեան
սպառնալիցութիւնը ափ է իջել «Կարլ Թագաւոր» մարտանաւից, 1918
թ. -ի փետ. 27, (հ. տ.), տաճիկներից մէկը ասել է, թէ՝ եթէ «զաշ-
նադիր կողմի» ամբողջ ազգաբնակչութիւնն է եկողը՝ շատ քիչ է, իսկ
եթէ միայն սպառնալիցութիւնն է՝ շատ շատ է»^{*}):

^{*}) Տակաւին Հայաստանի քաղաք Տիգրանիմ էր վերագրում այս խօսքը Լու-
կուլուսի սակաւարի բանակը տեսնելով՝ նա ասել է. «Եթէ սա դեսպաններ են,
շատ շատ են. եթէ սա քշմամբն է՝ շատ քիչ է»:

Բաթում ուղարկելիք պատերազմական ռազմաքաղաքական օրենքները 45 հոգուց — չափից աւելի մեծ թիւ, բայց հասկանալի է, եթէ, բացի այլ պատճառներից ի նկատի ունենանք Անդրկովկասի քաղաքական առանձնաշարժները պայմանները — նրա իշխանութեան հաւաքականութիւնը, զանազան իրար չվստահացող քաղաքական ուժերի գոյութիւնը :

Կային վեց պատերազմներ. Չխենկելի եւ Նիկոլաձէ Վրաստանի կողմից, Հաջինակի եւ Ռասուլ Զադէ՝ Ազրբեջանի, Քաջաղնուների եւ իմատիսեան՝ Հայաստանի : Բացի այդ, կային խորհրդակցանքներ, զանազան վարչութիւնների ներկայացուցիչներ, «ազգային քարտուղարներ», այսինքն ազգային խորհուրդների քարտուղարներ՝ վրաց, հայկական եւ մասմեթական : Կար զինուորական մի առաքելութիւն՝ քաղաքացիական զորավարներից եւ երեք զինապետներից, եւ այլն :

Հապճեպութիւնն ակնհայտ էր. ոչ ժամանակ կար եւ ոչ էլ հանգըստութիւն, որ գործի կանոնաւոր պատրաստութիւն տեսնէր :

Մեկնումը նշանակւած էր մայիս 5-ին՝ յատուկ զնացքով, որի մէջ տեղաւորւեցին նաեւ իրենց անհատական գործով տաճիկների զրաւած Բաթումը մեկնել կամեցող շատ մասնաւոր մարդիկ : Դժւար էր ընկնել կայարան, առանց տրամադրութեան տակ ինքնաշարժ ունենալու, բայց աւելի զժւարթութեամբ շարժւեց զնացքը, ուշ գիշերին :

Յաջորդ երեկոյ պատերազմութիւնը հասաւ Բաթում եւ տեղաւորւեց Հօթէլ Օրիանտալում, ծովափին, մաքսատան կողքին :

3 (15). ԶԳԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՆՁԵՐ

Դեռ մի ամիս չի անցել այն օրից, երբ Սէյմում տաք ճառեր էին արտասանում. «Բաթում կամ մահ», «առանց Բաթումի կեանքը անարժէք է», եւ ահա անկախ Անդրկովկասի պատերազմները Բաթումում են, բայց ոչ սեփական տանը, այլ հիւր տաճիկների մօտ (1918 թ. մայիս 6) :

Պատգամաւորները Սէյմում ընաւ չէին գերազնահատում Բաթումի արժէքը Կովկասի եւ առանձնապէս Վրաստանի համար. այդ արժէքը իսկապէս շատ մեծ է եւ հանրաժանօթ : Բայց Բաթումն էլ, Կարսն էլ, որպէս Ռուսական Կայսրութեան սահմանային ահագին ամրութիւններ, յարմարեցւած էին մեծ ուժերի պաշտպանութեան : Ընդ պայմաններում Կարսն ու Բաթումը կարող էին դառնալ (եւ կարող է պատահել, որ երբեւիցէ դառնան էլ) յատկապէս Կովկասի կամ Անդրկովկասի զինուորական համաչափ կազմակերպութեան տարրեր,

բայց այդ չէր կարող տեղի ունենալ մէկէն ի մէկ, 1917 եւ 1918 թւերի սեմերին, երբ ամէն ինչ աւերում, քար ու քանդ էր լինում:

Մի խօսքով, անկարելի եղաւ սահմանների պաշտպանութիւնը տաճկական ներխուժումից: Հեշտ էր սակայն հասկանալ, որ օրինակ, Բաթումի գրաւումը տաճիկների կողմից չէր կարելի համարել վերջնական. այդ բանը կախած էր պատերազմի ընդհանուր ելքից: Հետեւաբար, Տաճկաստանի հետ անհրաժեշտ էր համաձայնութեան դալ որոշ գոյալիճակի, գլխաւորապէս Բաթումի տնտեսական կապը Անդրկովկասի հետ ապահովելու համար: Բայց Վրաստանի հասարակական կարծիքը չափազանց ջղային վերաբերում էր ցոյց տալիս դէպի այդ հարցը, մանաւանդ սոցիալ-դեմոկրատները, որոնց գլխաւոր ծուխերից մէկը գտնւում էր Բաթումում, մեծ դժւարութեամբ էին հաշտւում այն բանի հետ, որը հաշտւում էին նրանք — վաղաժամ ու չափազանցած ձեւով — մահացու հարւած Վրաստանի համար: Կասկածում էին նաեւ, որ Բաթումի կորստով յեղափոխութեան եւ դեմոկրատիայի գործը կը տուժի:

Հայերը միանգամայն հասկանալի սարսափի մէջ էին: Տաճկաստանի Կարս վերադառնալով՝ սպառնալիք էր ստեղծւում Հայաստանի բովանդակ ապագայի համար, եւ արտաքինապէս այնպէս լաւ պաշտպանւած թւացող Ռուսական Հայաստանի գաւառներն էլ ենթարկւելու էին անմիջական եւ մահացու վտանգի: Պարզ է, որ հայերը Բաթում պիտի դային է՛լ աւելի ծանր դժացումով, քան վրացիները:

Տարբեր վիճակի մէջ էին ազրբէջանցիք: Նրանք, յանձին տաճիկների, սկսել էին տեսնել ազգակիցներ, որոնք կարող էին շատ բաներում օգնել իրենց. ոչինչ չէր ստիպում նրանց մոռալ աչքով նայել Բաթումի բանակցութիւնների վրա:

Այս այնքան տարբեր դրդապատճառներից, գնահատութիւններից, երկիւղներից, ձղտումներից այժմ հարկ էր ստեղծել մի ընդհանուր անդրկովկասեան քաղաքականութիւն:

Պատկերացնենք մեզ նաեւ տաճիկների զգացումները Բաթումը գրաւելիս: Նրանք կարծես թէ վերադառնում էին այս տեղ 40 տարւայ բացակայութիւնից յետոյ: Եւ թէեւ այն, որ գտան այս տեղ 1918 թւին, քիչ էր նմանում այն Բաթումին, որ թողել էին 1878-ին, նրանք Բրեստ-Լիտովսկում իրենց թողնւած այդ գաւառին (սանջակ) նայում էին մի տեսակ տաճկական էլզապ-Լոտարինդիայի պէս, որ վերադարձել էր ըստ պատկանելոյն: Այդ ուրոյն զգացումին միացել էր ինչ որ մի աւելի ընդհանուր բան. վաղուց ի վեր Տաճկաստանը սովորել էր գաւառներ կորցնել եւ քաղաքներ յանձնել: Առաջին ան-

գամն էր այս ժամանակին, որ սուլթանների զորութիւնը սկսել էր նւագել, տաճիկ զօրքերը գրաւել էին այնքան յայտնի եւ կարեւոր միջադարձ, որ այս յաջողութիւնը կարողանար շոյել Ստամբուլի սնաւպարծութիւնը: Թէկուզ փոքր միւլիթարանք էր Բաղդադի (1917թ. մարտ) եւ Երուսաղէմի (1917թ. դեկտեմբեր) կորուստից յետոյ:

Ահա թէ ինչու այնքա՞ն փայլում էին տաճիկ սպաների եւ պաշտօնեաների դէմքերը՝ 1918 թւի գարնանը, Բաթումում, եւ այնպէ՞ս նոր եւ պայծառ էին երեւում տաճիկական կարմիր դրօշակները ամէն տեղ — հասարակական եւ պետական շէնքերի գլխին:

Տաճիկների գլխաւոր պատերազմ էր այս խորհրդաժողովում արդարադատութեան եւ ժամանակակերպութեան արտաքին դործերի նախարար Խալիլ Բէյը, «Միութեան եւ Յառաջդիմութեան» նշանաւոր գործիչ (քիչ յետոյ՝ Կ. Պոլսի Խորհրդարանի նախագահ), ծանրաշարժ եւ տաճիկների համար սովորական՝ կեղծ-Փրանսական փայլի տէր մի մարդ: Բաթում էր գտնւում այդ ժամանակ եւ կովկասեան ռազմաճակատի տաճիկական գլխաւոր հրամանատարը՝ Վէհիբ փաշան, լայն թիկունքով, արեւնուշտ աչքերով մի մարդ, առանց կուրի նահանջող զօրքերի դէմ այնպէ՞ս հեշտութեամբ յաջողութիւններ ձեռք բերած մի հերոս: Մեր Բաթում եղած՝ ժամանակը իր զբօսանաւով Պոլսից եկաւ եւ ծովային նախարար Զեմալ փաշան, հռչակաւոր Լուսապետութեան (Թալէաթ-էնվէր-Զեմալ) մէկ անդամը, ներկայանալի եւ կարեւոր մի դէմք:^{*} Էնվէր փաշան էլ եղել էր Բաթում, դեռ մինչեւ մեր գալը. նրան ընդունել էին մեծ շքով, եւ վերադարձել էր, ինչպէս ասում են, բնաւ ոչ դատարկաձեռն:

Սակայն ամենից շատ հետաքրքրութիւն շարժողը գերմանական պատերազմիկութիւնն էր: Ժողովուրդը թշնամական զգացումներ չէր տածում Գերմանիայի հանդէպ եւ չէր էլ կարող տածել: Յանձին գերմանացիների մարդիկ տեսնում էին եւրոպական մշակոյթի, եւրոպական գիտութեան եւ հմտութեան լաւագոյն ներկայացուցիչներին, տեսնում էին փայլուն մարտիկներ, որ նւաճել էին Բալտիան երկիրները, Լեհաստանը, Ուկրաինան, Ռումանիան: Գերմանիան Բաթումում՝ այդ նշանակում էր մի սանձ Տաճկաստանի բերնին, իսկ այդ գլխաւորն էր: Գէթ այդպէս էր Անդրկովկասի քրիստոնեայ աղաքանակութեան բնազդը: Իսկ սլաւոնասիրական կամ այլ դրդումից առաջացած սրբազան ատելութիւն դէպի գերմանացիները — որ թրւում է թէ խոր չէր եւ ոռւս ժողովուրդի մէջ — չէին կարող ունենալ

^{*}) Զեմալ փաշան նպանեց Թիֆլիզում 1922թ. Աղանիստանից վերադառնալիս:

ոչ վրացիները, ոչ հայերը եւ ոչ էլ մահմեդականները :

Գերմանական կայսրութեան լիազօր ներկայացուցիչն էր բաւարական ծառայութեան ղօրավար Ֆոն Լոսովը, որ այդ ժամանակ գերմանական հրամանատարութեան ներկայացուցիչն էր տաճիկ կառավարութեան մօտ : Նա իր պարզութեամբ եւ ասպետական ոգով շատ շուտով գրաւեց ամենքի յարգանքը : Պատւիրակութեան կողմից յիշեմ այստեղ եւ կոմս Շուլէնբուրգին, որ պատերազմից առաջ գերմանական ընդհանուր հիւպատոս էր Թիֆլիսում, եւ Օ. Ֆոն-Վեզեն-դոնկին՝ բարձր կրթութեան տէր եւ դեռ երիտասարդ մի դիւանագէտ՝ մասնագէտ Մերձաւոր Արեւելքի գործերի : Ֆ. Վեզենդոնկը Ռիխարդ Վազների յայտնի բարեկամուհի-մեկեկնաս Մատիլդա Վեզենդոնկի թոռն էր եւ սանը հռչակաւոր Հելմոլցի :

Անգրկովկասը, այսինքն աւելի ճիշտ, Անգրկովկասի երեք աղ-գերն ունէին խիստ աշխատանքի ներկայացուցիչներ : Պատւիրակութեան նախագահը՝ Ա. Ի. Չխենկելին, Անգրկովկասեան Կառավարութեան նախագահը, դեռ Դոմայի անդամ եղած ժամանակ, իրեն ցոյց տւեց մեծ սիրահար քաղաքականութեան վերաբերող հարցերի. նա սովորաբար այդ հարցերի մասին էր խօսում սոցիալ-դեմոկրատական հատուածի կողմից : Իր կուսակցութեան մէջ նա միւսներին աւելի շատ էր մտածում աղգային հարցի եւ Վրաստանի աղգային շահերի մասին. պաշտպանում էր նրա ինքնավարութիւնը, երբ դեռ այդ բանը վատ նշան էր համարւում վրացական սոցիալ-դեմոկրատների մէջ : Նրա հայրենասիրութեան արմատները աճում էին վրաց հոգեւորականութեան լաւ մասի խորունկ աղգային աւանդութիւններից - մի միջավայր, որից դուրս էր եկել Չխենկելին : Միաժամանակ նրա ջանասիրութիւնն, օրինապահութիւնը ողջ Անգրկովկասին վերաբերող շահերի նկատմամբ կասկած չէր յարուցանում եւ ոչ մէկի մէջ :

Վրացական միւս պատւիրակը՝ Ն.Շ.Նիկողաձէն խիստ թեթեւութեամբ կրում էր ուսերին իր 75 տարիների ծանր բեռը : Որքա՞ն ջուր էր հոսել այն ժամանակներից, երբ նա պատանեկան յափշտակութեամբ խորհրդակցում էր Գերցէնի հետ այն մասին, թէ ինչպէս ապտակէ այն ժամանակաւ ժանդարմների պետին. կամ նոյնխիսկ այն օրից, երբ իբրեւ խմբագիր Թիֆլիսի «Օբգոր» թերթի, այնքան աղմուկ հանեց ամբողջ Ռուսաստանում իր գրական դատաւարութեամբ, որի մասին մանրամասն պատմում է նոյնխիսկ Անատոլ Լեռուս-Բոլիէն, իր «Էմպիր դէ Ցար»-ի մէջ (այդ ամենը, սակայն, «անդրջրհեղեկան» բաներ են) :

Նրա անսպառ յիշողութիւնը, տաճկա-կովկասեան յարաբերու-

թիւնների ծանօթութիւնը, խօսքի փայլուն շնորհքը, աչքերի կրակը, սպիտակ մօրուքն ու պարթեւ հասակը՝ նրա ներկայութիւնը դարձրեց նոյն էին շատ օգտակար Բաթումում :

Հայկական գլխաւոր պատերազմը Ա. Ի. Խատիսեանն էր, կրթութեամբ բժիշկ, Վրաստանի բնիկ հայերից, որ մի քանի տարի քաղաքագլուխ էր եղել Թիֆլիզում, պէրսոնա գրաքիսիմա փոխարքայի պալատում, Վորոնցովների օրով, տիպար ու գործօն ներկայացուցիչը հայկական այն հոսանքի, որ պահելով եւ ընդարձակելով հայերի գրաւած դիրքերը ամբողջ Կովկասում՝ յոյս ունէր Ռուսաստանի օգնութեամբ կառուցանել եւ տաճկական Հայաստանը : Նա փորձած, շատ բան տեսած, կենսուրախ, կարմրաթուշ մի գործիչ էր :

Մնացեալ երեքը մինչեւ այդ անդրկովկասեան քաղաքական գործերում համեմատաբար աւելի քիչ յայտնի մարդիկ էին, թէեւ բոլորն էլ կոչւած էին կարեւոր դեր խաղալու իրենց ժողովուրդների ճակատագրի նկատմամբ : Ռ. Քաջաղնունին շուտով դարձաւ Հայաստանի վարչապետը : Մինչեւ այդ, Անդրկովկասեան Կառավարութեան մէջ, նա համարուում էր «պետական խնամատարութեան» նախարար : Խատիսեանը, Քաջաղնունին եւ Մ. Հաջինսկին (այս վերջին երկուսը ճարտարապետներ էին) անդամ էին Չխենկելի կազմած կառավարութեան : Մ. Հաջինսկին մտել էր կառավարութեան մէջ առեւտրի եւ արդիւնաբերութեան նախարարի պաշտօնով :*)

Ազրբէջանցի երկրորդ պատերազմը Ռադուլ-Ջադէն էր, որ շատ աչքի ընկաւ Մէյմում : Նա անուն էր հանել եւ Պարսկաստանում, աշխատելով Թէհրանի մամուլի մէջ, պարսկական վերանորոգութեան ներկած գործիչների հետ միասին : Հիանալի գիտնալով պարսկերէն եւ տաճկերէն լեզուները՝ նա հէնց իր անձի օրինակով ցոյց էր տալիս, թէ ինչքան կարող են լինել կարեւոր եւ ընդարձակ Արեւելեան Անդրկովկասի քաղաքական կապերը, եթէ նա քաղաքականապէս զարգանայ :

ԳԼՈՒԽ Բ.

ԲՈՒՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՐ

4 (16) ՄԱՅԻՍ 11-Ի ՆԻՍՏՐ

Այժմ անցնեմ բուն Խորհրդաժողովին, որի արտաքին նկարագրութիւնը շատ կարճ է լինելու. տեղի ունեցաւ ընդամենը մէկ նիստ, մայիս 11-ին, Բաթումի ակումբի շէնքում :

*) Բայց նախարարութիւնների բաժանումը լուրջ նշանակութիւն չուներ. այդ բաժանումները վերացան Անդրկովկասեան Կառավարութեան շուտ չփանալու հետեւում :

Խալիլ բէյը արտասանեց տաճիւրէն ողջոյնի խօսք՝ յիշելով Կովկասի գլխին ծագած «աղատութեան չքնաղ աստղը», Տաճկաստանի փափաքը, բարի հարեւանութիւն հաստատելու մասին եւ այլն։ Օրլոան բէյը (որ Բրեստ-Լիտովսկում էլ քարտուղար էր) կարդաց ճառի Ֆրանսերէն թարգմանութիւնը։

Այնուհետեւ քննեց Հիւսիսային Կովկասի լեռնականների հանրապետութեան ներկայացուցիչ Հայդար բէյ Բամմատի խորհրդաժողովին մասնակցելու թույլտուութեան խնդիրը։ Տաճկաստանում շատ կարեւոր կապեր ունենալով՝ լեռնական գործիչները, իրենց անկախութիւնը յայտարարելուց յետոյ, շտապել էին Պոլիս, դիւանադիտական կապեր եւ ամէն տեսակի նեցուկներ որոնելու համար։ Այն տեղ էր գտնուում եւ նրանց կառավարութեան նախագահ Աբդուլ-Մէջլիս-բէյ Չերմուքը, ծագումով չեչեն, Կովկասեան հռչակաւոր «Վայրի դիւրգիլայի» նախկին սպայ, որ միեւնոյն ժամանակ գործի մարդ էր եւ Գրոզնու նաւթի հետ կապւած մեծ շահեր ունէր։ Լեռնական պատերազմների Պոլսից տաճիկների հետ միասին Բաթում խորհրդաժողովին գալու մասին հաղորդւած էր արդէն Վեհիբ-փաշայի այն հեռագրով, որով յայտնում էր, թէ Տաճկաստանը ճանաչել է անկախ Անդրկովկասի կառավարութիւնը (ապրիլ 15, հ. տ.)։ Լեռնականների հանրապետութեան համակովկասեան Դաշնակցութեան մէջ մտնելու կարելիութեանը ամենքը համակրանքով էին վերաբերում, եւ Հ. Բ. Բամմատի խորհրդաժողովին մասնակցելը, իհարկէ, առարկութիւն չէր վերցնում։*)

Դեռ գործի չէինք ձեռնարկած, երբ պարզեց հիմնական տարակարծութիւն Անդրկովկասի եւ Տաճկաստանի պատերազմութիւնների միջեւ՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը բանակցութիւնների հիմք ընդունելու մասին։ Չխենկելին՝ կրկնելով դեռ Տրապիզոնում արած յայտարարութիւնը, թէ Անդրկովկասը լիովին ընդունում է այդ դաշնագիրը եւ կամենում է, որ նրա բնագիրը լինի բանակցութիւնների միակ հիմունքը, որպէսզի Անդրկովկասը ստիպւած չլինի հողային նոր զիջումներ անել Տաճկաստանին, բացի Բրեստ-Լիտովսկի դաշնագրով նախատեսածից։ Ընդհակառակը, Խալիլ բէյը, ընդունելով այդ յայտարարութիւնը ի տեղեկութիւն՝ մատնանշում էր դիւանադիտական բանակցութիւնների խղճան եւ ռազմական գործողութիւնների վերսկսման վրա Տաճկաստանի եւ Անդրկովկասի միջեւ,

*) Լիազօրութիւնները ստուգող յանձնախումբը կազմւած էր՝ Կոստ Շուկմբալբից, տանիկ իրաւագէտ Նուսրէտ-բէյից, Բամմատից եւ ինձամից (Անդրկովկասեան պատերազմութեան կողմից)։

այսինքն՝ նոր փաստեր, որոնց հետեւանքով Տաճկաստանն այլեւս համաձայն չէ, որ այդ դաշնագիրը համարւի միակ հիմք տեղի ունենալիք բանակցութիւնների եւ իրաւունք է վերապահում իրեն նոր պահանջներ առաջադրելու: Ուստի, խալիլ բէյ առաջարկեց որպէս բանակցութիւնների հիմք ընդունել տաճիկների պատրաստած հաշտութեան պայմանագրի բնագիրը, որ հէնց այդտեղ էլ ներկայացւեց:

Գերմանիայի ներկայացուցիչը սահմանափակեց լոկ ի տեղեկութիւն ընդունելով Տաճկաստանի եւ Անդրկովկասի միջեւ ծագած այդ տարակարծութիւնը:

Ի վերջոյ, մեր պատւիրակութիւնը յայտնեց իր համաձայնութիւնը... Ծանօթանալ տաճկական նախագծին եւ դրանով փակեց խորհրդաժողովի նիստը: Ի դէպ այս նիստին էր, որ անդրկովկասեան պատւիրակութիւնը առաջին անգամ ստացաւ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պաշտօնական բնագիրը:

5 (17) ՏԱՃԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

«Օսմանեան Կայսերական Կառավարութեան եւ Անդրկովկասի Դաշնակցական Հանրապետութեան հաշտութեան եւ բարեկամական դաշնագրի» տաճկական նախագիծը բաղկացած էր 12 յօդոյցի: Դաշնագրին կցւած էր երեք յաւելած (Ժամանակաւոր կանոններ առեւտուրի եւ ծովային հաղորդակցութեան մասին. սահմանակից վայրերի հաղորդակցութեան առանձին արտօնութիւնների մասին. դաշնագրի մեկնութեան առթիւ ծագելիք թիւրիմացութիւնները հարթելու կարգի մասին):

Վերջապէս հիմնական Դաշնագիրը լրացնող մի մաս, որ վերաբերում էր Տաճկաստանի այդ վայրկեանին ունեցած ռազմական չափերին:

Անկասկած, ամենից մեծ տպաւորութիւնը թողին Տաճկաստանի հողային նոր պահանջները: Նախագծի մէջ մատնանշւած սահմանը Վրաստանի համար նշանակում էր անջատումը նրա այն հին շրջանների (հետագային ենթարկւած իսլամացման), որոնք Ռուսաստանին էին անցել 1828թ. Ալբրիանապոլսի դաշնագրով եւ ամենասերտ կերպով կապւած էին Թիֆլիսի նախկին նահանգի հետ: Սօսքը Ախալցխայի եւ Ախալքալակի գաւառների մասին է. վերջին գաւառի վրա, որ 19-րդ դարում բնակեցւած էր հայ գաղթականներով, աչք ունէր եւ Հայաստանը:

Հայաստանի համար նոր սահմանը համազօր էր համարեա կատարեալ ոչնչացման. Ալէքսանդրապոլը եւ Ալէքսանդրապոլի ու Էջմիածնի գաւառների մեծ մասը — այսինքն, Հայաստանի, այսպէս ա-

ւած, ամենից հայկական մասը — անցնում էր Տաճկաստանին, Կարս-Ալեքսանդրապոլ եւ Ալեքսանդրապոլ-պարսկական սահման հասնող երկաթուղագծով միասին:

Այսպիսի պայմաններում Տաճկաստանն իսկապէս ապահովում էր իրեն ոչ միայն քաղաքական հակադէմքը ամբողջ Անդրկովկասի վրա, այլեւ սահմանակից էր դառնում Ադրբէջանին ու Պարսկաստանին (այսինքն՝ պարսկական Ադրբէջանին) — այլ խօսքով, Տաճկաստանը մօտենում էր այն երկրներին, որոնց ազգաբնակչութիւնը ծագումով ու լեզուով թուրք էր:

Այնուհետեւ, տաճկական նախագծի կարեւոր մաս էին կազմում այն պահանջները, որոնք նպատակ ունէին ղեւրացնել ռազմական դործողութիւնները Հիւսիսային Պարսկաստանում՝ անգլիացիների դէմ: Գլխաւորապէս նկատի էր առնւած Անդրկովկասի երկաթուղագծերի շահագործումը այդ նպատակով, ինչպէս եւ Բաղուի նաւահանգստի (հնարաւոր դործողութիւնների համար Կասպից ծովի վրա)

Յամենայն դէպս, հարցերը դրւած էին միանգամայն պարզ ու որոշ: Ամենքի համար հասկանալի էր, որ տաճիկների պահանջները չպիտի մեղմացւին էական չափով, որ նրանց ուժով ընդդիմանալ մենք չենք կարող եւ որ այդ պայմանները ընդունելը հիմքից հարւածում է Անդրկովկասը, որպէս երեք ժողովուրդների միութեան, որովհետեւ նոր «սահմանադրութիւն» յետոյ Հայաստանից շատ բան չէր մնում:

(Շարունակելի)

